

SARKIS S. SARYAN, *Language Connections (Kinschips of Armenian with Sister Indoeuropean Languages)*, West Hanover, Mass., 1982.

Հայոց լեզվի ծագման, հնդեվրոպական լեզուների հետ նրա ունեցած առնչությունների և վաղ շրջանի պատմության նկատմամբ հետազոտողների ահող հետաքրքրության մի նոր վկայություն է վերահիշյալ գիրքը: Սակայն նրա հիմնական նպատակը ոչ այնքան հետազոտական քննություն կատարելն է, որքան ընթերցողների լայն շրջանակներին, հատկապես ոչ մասնագետ ընթերցողներին հայերենի համեմատական հնդեվրոպականության հիմունքներին և հայոց լեզվի ցեղակցական կապերին ծանոթացնելը: Հեղինակի աշխատությունը դուրսմորոնելի ձևով ներկայացնում է անցած հարյուրամյակում հայագիտության մեջ արժանավոր գաղափարներն ու հայեցակետերը (էջ 111): Այս գրքի համար ամերիկացի էսանյաված հայագետ Ջոն Գրեյսի գրա՝ առաջարկումով նշվում է, որ Ս. Սարյանի գործը կարող է կամուրջ հանդիսանալ մասնագետ լեզվաբանի և հետաքրքրասեր ընթերցողի միջև:

Գրքում զետեղված է նաև ակադ. Գ. Ջահուկյանի ներածական խոսքը, ուր արժեքավորվում է մենագրությունը և մասնավորապես ընդգծվում, որ Ս. Սարյանին հաջողվել է փաստերը ներկայացնելու գիտական հավաստիությունը զուգահեյնքել նրանց մատչելի մեկնաբանության հետ, որ հատուկ հետաքրքրանք ու հաշվի արդյունք է: Ըստ այդմ ընթերցողը կարող է անհրաժեշտ տեղեկություններ քաղել հայերենի, նրա նախապատմություն, ինչպես նաև հնդեվրոպական մյուս լեզուների մասին, ծանոթանալ հ.-և. լեզուների համեմատական ուսումնասիրության փաստերին, հայերենի դիրքին մյուս լեզուների շրջանում, վերջիններիս հետ ունեցած նրա մերձավորության աստիճանին (էջ XV):

Գրքի այս նպատակադրումով էլ պայմանավորված է նրա կառուցվածքը: Հեղինակը նախնական գիտելիքներ է տալիս լեզուների ցեղակություն, լեզվաբանական գիտության ձևավորման և համեմատական մեթոդի տարրերի, բնիս և փոխառյալ բառաշարերի մասին, ակնարկի ձևով տալիս է հայերենի բնույթի որոշման և հնդեվրոպական այլ լեզուների հետ ունեցած նրա կապերի ուսումնասիրության պատմությունը համառոտ կերպով ներկայացնելով հունարենի, փյունգերենի, իսթերենի և հայերենի առնչությունները: Այնուհետև խոսում է հայ գրերի գոյության, V դարի մատենագրության, հատկապես այդ շրջանի հայ թարգմանիչների գործունեության, ինչպես նաև նախադրաբարյան շրջանում գոյություն ունեցած հայ բարբառների

մասին: Վերջապես, բուն նյութին անցնելուց առաջ ամփոփ և նշգրիտ շարադրանքով տեղեկություններ է տալիս հնդեվրոպական լեզվաբանության, հնագույն վկայությունների, պատմական դարգացման վերաբերյալ: Հատուկ ուշադրություն է դարձվում անգլերենի առանձնացման ու ձևավորման պատմությանը:

Գրքի հիմնական մասը նվիրված է հայերենի հնդեվրոպական համակարգի համեմատական բրնետությանը: Անհրաժեշտ տեղեկություններ տալով հնդեվրոպական նախալեզվի համար վերականգնվող լուրաքանչյուր հնդունի մասին, Ս. Սարյանը դիտարկում է դրանց արտացոլումը հայերենում, բացատրում ընդհանուր օրինաչափությունը և նշում նկատվող շեղումները: Յուրաքանչյուր հնդունի համար կազմվում է տվյալ հնդունը պարունակող բառերի համեմատական տախտակ, որտեղ բերվում են զուգահեռ ձևեր հայերենի հետ համեմատաբար մերձավոր առնչություններ ունեցող լեզուներից, հիմնականում՝ հունարենից, լատիներենից, հնդիրանական և սլավոնական լեզուներից: Հետաքրքրական ձևով է ներկայացված անգլերենի նյութը: Բացի հին կամ ժամանակակից անգլերենում պահպանված բնիկ բառերից հեղինակը բերում է և այնպիսի համապատասխանություններ, որոնք որպես փոխառություն անգլերենին են անցել հունարենից և լատիներենից (այդ թվում էրբեմն նաև ֆրանսերենի միջնորդությամբ) և ներկայումս շատ տարածված ու հանրածանոթ բառահավաքություններ են, ինչպես, օր.՝ հայ. միտ(ք), լատ. mens, սանս. manas, անգլ. mind (բնիկ) և mental (լատիներենից փոխառյալ), հայ. նոր, լատ. novus, սանս. navas, անգլ. new (բնիկ) և novel (փոխառյալ), հայ. աստղ, հուն. astēr, լատ. stella, սանս. star, անգլ. star (բնիկ) և asteroid (փոխառյալ):

Այսպիսով հայերեն և անգլերեն լեզվանյութի համապատասխանությունների քանակն աճում է և գիրքն ավելի հետաքրքրական դարձնում անգլերենին տիրապետող ընթերցողի համար: Անգլիստոս ընթերցողին նկատի ունենալով էլ տրված է հայերեն բառերի տառադարձությունը, ըստ հնարավորին մոտեցնելով անգլերենի ուղղագրությանը, ինչպես՝ շ—sh, ճ—ch, չ—ch', ծ—ts, դ—gh, թեև առանձին էջում բերվում է նաև հայերենի գիտական տառադարձությունը՝ ըստ

Հյուրըման—Մեյն—Բենվենիստի Պետք է նշել, սակայն, որ որոշ դեպքերում տառադարձության մեջ նկատվում է հայերենի հին (գրաբար) և նոր արտասանության միօրինակացում, ինչպես՝ զ-ն միշտ տառադարձվում է ցի, թեև գրաբարում այն հնչել է որպես չ:

Հնչյունական համակարգը քննվում է ըստ ձայնավոր, ձայնորդ և բաղաձայն հնթահամակարգերի, որի ընթացքում հեղինակն առաջնորդվում է համեմատական հնդեվրոպաբանության և հայագիտության դասական մակարդակով (Հյուրըման, Մեյն, Աճառյան), մասնավորապես ընդունելով հնդեվրոպական նախալեզվի պայթական բաղաձայնների շորս շարք, զուգահեռներ անցկացնելով գերմանական լեզուներում (այդ թրվում անգլերենում) այդ նույն բաղաձայնների տեղաշարժի հետ և հայերենում կրած նրանց

հետագա ձևափոխությունները ներկայացնելով համեմատական աղյուսակների տեսքով:

Որպես վերջաբան, ընդհանուր եզրակացություններից բացի, գրքում ներկայացվում է հայագիտության այժմյան վիճակը, նշվում, որ հայերենի ուսումնասիրության կենտրոնը ներկայումս Եվրոպայից տեղափոխվել է Հայաստան, որտեղ հայագիտական ավանդական գիտակարգերի հետ մեկտեղ զարգանում են նաև փորձառական հնչյունաբանությունը, հանրալեզվաբանությունն ու հոգելեզվաբանությունը, լեզվաբանական աշխարհագրությունն ու մեքենական թարգմանությունը և այլ ժամանակակից ուղղություններ: Վերջում, հավելվածի ձևով տրվում է նաև գրքում տեղ գտած բառանյութի հալերենանգլերեն բառարան և հատերտիր մատենաշարություն:

Լ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

LOUIS VANDEN BERGHE EN LEON DE MEYER, *Urartu: een vergeten cultuur uit het bergland Armenië*, Saint-Pietersabdij-Gent, 9 oktober 1982—30 januari 1983.

ԼՈՒԻՍ ՎԱՆԴԵՆ ԲԵՐԳԷ ԵՎ ԼԵՈՆ ԴԵ ՄԵՅԵՐ, Ուրարտու, Հայկական լեռնաշխարհի մոռացված մշակույթը, Սենթ-Պիտերսաբդի-Գենտ, 9 հոկտեմբերի 1982—30 հունվարի 1983

Վերջին տարիներս Ուրարտուի պատմության և մշակույթի նկատմամբ հետաքրքրությունը աշխարհում կրկին աճել է: Եվրոպայի տարբեր երկրներում կազմակերպվում են ուրարտական մշակույթին նվիրված դանազան ցուցահանդեսներ, հրատարակվում են կատալոգներ¹: Վերջիններիս շարքում ուշագրավ է հուլանդացի գիտնականներ Լուիս Վանդեն Բերգեի և Լեոն Դե Մեյերի (աշխատակցել է նաև մի երրորդ անձ, որի անվան սկզբնատառերն են նշված միայն՝ B. O.) «Ուրարտու, Հայկական լեռնաշխարհի մոռացված մշակույթը» կատալոգը:

Մյուսինսնյան կատալոգի համեմատությամբ, որտեղ յուրաքանչյուր բաժին գրված է տվյալ շրջանի մասնագետի փորձից, գրախոսվող աշխատանքը որոշ չափով կոմպլիյատիվ բնույթի

ունի: Կատալոգի կարևոր արժանիքներից մեկն այն է, որ այստեղ ի մի են բերված Արևմտյան Եվրոպայի (մասնավորապես Եվրոպայի) թանգարաններում պահվող ուրարտական նշույթներ, որոնց հրատարակությունը մեծապես կշնչապատի դրանք գիտական շրջանառության մեջ դնելու գործին:

Կատալոգը սկսվում է Ուրարտուի պատմության ուսումնասիրությանը նվիրված ոչ մեծ հոդվածով: Այնուհետև որոշ տեղեկություններ են տրվում Ուրարտուի պատմական աշխարհագրության ու քաղաքական պատմության մասին: Կատալոգում տեղ է գտել նաև ուրարտական արձայական դիմաստիանների լրացված համեմատական ժամանակագրական աղյուսակը, որտեղ Ուրարտուի պատմության վերջին շրջանը և ժառանգորդության հաջորդականությունը ներկայացված է երկու անսանկյունով, որոնցից առաջինը Ն. Վ. Հարոսյունյանի առաջարկած արքայացանկն է², իսկ երկրորդը հայտնի է Մյուն-

¹ Urartu, Ein wiederent deckter Rivale Assyriens, München, 1976; Urartu, Das Reich am Ararat, Hamburg, 1979; R. Tanabe, A. Hori, S. Miyashita, K. Ishida, Studies in the Urartian Bronze Objects from Japanese Collections.—Bulletin of the Ancient Orient Museum, v. IV, Tokyo, 1982.

² Н. В. Арутюнян. Некоторые вопросы последнего периода истории Урар-